



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

289
ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ՔՐԱԴԱՐԱՆԵԸ



ՄԵՐ

ՄԱԹԷՕ ՖԱԼԿՕՆԷ

ՄԱՏՆԻԶԸ

ԼՐՏԵՍ

№ 9

84
Մ-66

1905
Ս. ՊԵՏԵՐՐԱՈՒՆԳ



1725

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

20 APR 200

Հրատ. տիկին Զարեհ

19 NOV 201

84

5-66 սր.

ՄԱԹԷՕ ՔԱԼԿՈՆԷ

ՄԱՏՆԻԶԸ

549

ԼՐՏԵՍ

6800



Ս. ՊԵՏԵՐՅԱՆ

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1905

28 JUN 2013

6661 III



Дозволено ценз. С.-Петербургъ 16 Августа 1905 г.

ՄԱԹԷՕ ՖԱԼԿՕՆԷ

ՊԱՏՄՈՒՄԵՐ

ՊՐՕՍՊԵՐ ՍԷՐԻՄԷԻ.

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն.

Ճաղանդաւոր ֆրանսիացի գրող Պրօսպէր Մէրիժէն ծնուել է 1803 թ.: Նա երկար ժամանակ սովորում էր. սկզբում տարրական դպրոցներում և ապա բարձրագոյն վարժարանում. սակայն այդ բոլորը թիչ էր թւում խելացի, հանճարեղ պատանուն: Երբ նա իւր ուսումն աւարտեց, սկսեց անդադար ճանա-

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ, д. 4.

պարհորդել զանազան երկրներ: Նա եղել է
 և՛ անգլիացիների և՛ իտալացիների մէջ, այցել-
 լել է Արևելքը, որտեղ ապրում են թիւրքեր,
 արաբներ և այլ զանազան ազգութիւններ:
 այցելել է հարաւը, որտեղ ապրում են չոչները,
 իւրաքանչիւր ժողովրդի հետ նա լաւ ծանո-
 թանում էր, սովորում էր նրանց լեզուն, ու-
 սումնասիրում էր նրանց բարքն ու կեանքը,
 սովորութիւնները, արհեստները: Կարճ միջո-
 ցում Պրոսպէր Մէրիմէն սովորեց խօսել ան-
 գլիերէն, սպաներէն, իտալերէն, չունարէն և
 նոյն իսկ ռուսերէն: Ընդունակ պատանուն այդ
 բոլորը շատ զիւրութեամբ էր չաջողում: Նա
 շատ հեշտ ծանօթանում էր բոլոր տեսած ու
 լսածի հետ և նոյն հեշտութեամբ էլ այդ բո-
 լորը նկարագրում էր իւր լոյս բնծալած զբո-
 րում: Հայրենիք վերադառնալով, նա հրա-
 տարակեց Փրանսիայում կատարած իւր հա-
 նապարհորդութիւնները. իւր այդ արժանա-
 ւոր երկերի համար նա բնարուեց Փրանսիա-
 կան Կաճառի անդամ, մի հիմնարկութեան,
 որտեղ աշխատում էին միայն չաջանի գիտնա-
 կաններ ու գեղարուեստագետներ: Այնուհետև
 Պրոսպէր Մէրիմէն բնորուեց նաև Սենատի
 անդամ:

Մէրիմէն կարող էր շատ լաւ ապրել, եթէ

չլինէր նրա խիստ զգալուն սիրան ու ապա-
 ւորուող միաբը:

Մէրիմէն անկարող էր սառնասիրա նաչել
 և տանել մարդկանց ստութիւնները, կեղծիք-
 ներն ու անհաւատարմութիւնները: Նա ինքն
 էլ շատ անգամ իւր վրայ էր փորձել իրեն
 հասցրած ծանր վիրաւորանքները, դառն հիա-
 սթափութիւնները. այնպէս որ վերջիվերջոյ
 նա որոշել էր, թէ մարդուս կեանքը մի ան-
 դապրուն պատերազմ է, որտեղ միայն թըշ-
 նամիների կարելի է պատահել. թէ մարդս
 կեանքի մէջ հաւասար կերպով վատ է ապ-
 րում ու տանջում և՛ բարեհոգի թշնամույ
 և՛ վատաբարոյ բարեկամից: Զարմանալի չէ,
 որ Մէրիմէն, լինելով 'ի բնէ բարի, հեզահամ-
 բոյր, փափկասիրտ, ժամանակի բնթացքում
 դարձաւ մռայլ, ծածկամիտ, կասկածոտ, նրա
 գէմքի վրայ երևում էր դառն հեղնական
 ժպիտ:

Պրոսպէր Մէրիմէն մեծ մասամբ զրում էր
 պարզ, հասարակ մարդկանց մասին՝ գնչունե-
 րի, որսորդների, աւազակների և այլն: Այդ
 մարդկանցից նա բնորում էր իւր պատմուածք-
 ների համար այնպիսի անձնաւորութիւններ,
 որոնք աճուր կամքի տէր էին, որոնք չէին
 սիրում աւելորդ ու շատ խօսել, այլ խօսքից

իսկոյն և ետ գիծուձ էին գործի: Իւր այդ պատմուածքներուձ Մէրիմէն գրուձ էր այնպէս, որ ինքըր ամեն տեղ ծնուձ էր հանգիստ, ոչ մի տեղ նա չէր արտայայտուձ ոչ իւր համակրանքը և ոչ էլ հակակրանքն այս կամ այն նկարագրած անձերի վերայերմամբ:

Ներկայ պատմուածքի՛ «Մաթէօ Փալիօնէի» մէջ պատկերացուձ է մի իտալացի որսորդի ուժեղ և միեւնոյն ժամանակ վայրենի բնուորութիւնը: Մաթէօ Փալիօնէի մէջ կից ապրուձ են միանգամայն իրար հակառակ զբոյցմունքներ ու մտքեր: Նրա անմնաւորութեան մէջ կրգանէք կարեկցութիւն, պատրաստակամութիւն, բարութիւն՝ զգացմունքներ, որոնք Մաթէօյին չէին թոյլ տալ չետ վանել որեւէ թրշւառին, մինչև որ սրան մի օգնութիւն չհասցնէր. մինչգեռ նոյն Մաթէօն, ինչպէս և կրղղու բոլոր բնակիչները, աշխատանքի ամբողջ բեռը բարձուձ էր իւր կնոջ վրայ, իսկ ինքըր միայն զբաղուձ էր իւր հրացանով ու որսով: Մաթէօն չափաղանց բարի է, բայց և այնպէս նա չի տատանուիլ դանակ խրել կամ գնդակ արձակել այն մարդու վրայ, որը նրան թէկուզ խօսքով վիրաւորէ: Նիւրաբիրութեան պարտքը՝ իւր հիւրին կերակրելու, պահպանելու և պաշտպանելու պարտաւորութիւնն, պատ-

ւի պարտքը, սպանուածի ու անպատուածի համար վրէժ առնելը, դաւաճանութեանը պախարակումն — ահա թէ ինչ է պատկերացնուձ Պրօսպէր Մէրիմէն այդ կոպիա — անտաշ, բայց ի բնէ ազնիւ ու փափուկ մարդու մէջ:

Այս պատմուածքի մէջ նկարագրած անողոր պատիժը, որին ենթարկուձ է Փալիօնէի միակ զաւակը, որ մոռացել է հիւրընկալութեան պարտաւորութիւնը, զաւակը, որ մեղաւոր չէ, որովհետև հայրն ու մայրը նրան հէնց փոքրութիւնից չեն սովորեցրել հիւրընկալութեան ու ազնուութեան պարտականութիւնները՝ վառ կերպով մեղ ներկայացնուձ է Փալիօնէի ուժեղ և ընդնմին սանձարձակ վայրենի բնաւորութիւնը:

Բացի Պրօսպէր Մէրիմէի այս գեղեցիկ պատմուածքից, ներկայ գրքոյկի մէջ գեանդուձ ենք նաև երկու այլ հեղինակների փոքրիկ պատմուածքներ, որոնք նոյնանման զաղափար են արժարձուձ՝ մասնութեան ու լրտեսութեան ստորութիւնը:

Կօրսիկայ կղզու Պօրաօ - Վէրիօ քաղաքից սկսուձ է զէպի հիւսիս - արևմուտք բաւա-

կան թէք մի գարիվեր: Հարկաւոր է ամբողջ երեք ժամ բարձրանալ նեղ, ծուռուծուռ շաւիղներով, որոնք տեղ-տեղ բռնուած են անհրաժեշտ քարակոյտերով կամ ընդմիջուած են ձորակներով ու հեղեղատներով, որպէսզի վերջապէս կարելի լինի հասնել ոչ այնքան բարձր, բայց շատ խիտ թփերից բաղկացած լայնածաւալ անտառի եզերքին: Այս տեսակ թփերի անտառները, որոնք յաշտնի են Իտալիայի և Կորսիկայի ժողովրդների մէջ, «Մակի» (maguis) անուանով, կորսիկացի հովիւների ամենասիրելի տեղն է, ինչպէս և ամենայուսալի ապաստանն է այն բոլոր անձանց համար, որոնք՝ որևէ հաշիւներ ունեն ստիկանութեան հետ:

Կորսիկացիներն իրենք են շինում թփերի յայդ տեսակ նորածիլ անտառներ: Որպէսզի ազատուեն արտերը պարարտեցնելու աւելորդ հողսերից, դիւղացիները ուղղակի այրում են անտառի որոշ մասերը: Այդպիսի դէպքերում հրդէհը սովորաբար ծաւալուած է աւելի մեծ տարածութեան վրայ, քան սկզբումը հարկաւոր էր: Սակայն սորա վրայ ոչ ոք ուշադրութիւն չի գարձնում, հրապուրուած լինելով՝ ապազայում որքան կարելի է առատ հունձ ստանալ այս եղանակով պարարտեցրած հողերից: Հնձի ժամանակ հաւաքուած են միմիայն

հասկերը, իսկ ծղօտը թողնուած են դաշտերում, որովհետեւ աւելորդ են համարուած զուր տեղը ջանք ու ժամանակ վատնել նրա հաւաքելու համար: Հետեւեալ տարին գարնանը ծառերի այն արմատները, որոնք չէին այրուել հրդէհից ու մնացել էին գետնի մէջ, խիտ առատ բողբոջներ են արձակուած և սկսում են ծլել: Մի քանի տարիներից յետոյ արդէն գոյանում է մի անտառակ, որի ծառերը հասնում են 7—8 ոտնաչափի: Ահա այս տեսակ թփերից գարգացած նորածիլ անտառը տեղացի ժողովրդի բերանում յաշտնի է «մակի» անունով: Մառերն ու թփերը այստեղ բսնում են խառնիխուռն, անկանոն և այնքան խիտ, որ մարդ դժուարութեամբ կարող է անցնել մայրառների միջով: Կարկաւոր է միշտ կացնի օգնութեամբ նանապարհ բաց անել, իսկ տեղ-տեղ նոյն իսկ վայրենի ոչխարը չի կարող ներս թափանցել:

Պորտո-Վէքիօյի «մակին» կարող էր ծառայել մարդասպանների համար իբրև ամենաապահով մի ապաստան: Բաւական էր միայն վերցնել իւր հետ հրացան, վառուղ ու զնդակներ նաև մի վերարկու, որը կը լինէր փախստականի համար և՛ անկողին և՛ վերմակ: Կերակրի համար հարկ չկար անհանդիսա լի-

ներու. հովիւները բերում էին կաթ, պանիր, շաքիւնաղներ: Փախստակներ կարող էր ապրել նպրտեղ, ոչ մի ահ չունենալով ոչ ոստիկանութեան և ոչ էլ սպանուածի ազգականների վրէժխնդրութիւնից: Վասնզ էր սպառնում միաջն այն ժամանակ, երբ հրազէնի նիւթերը հատնում էին և փախստակներ ստիպւած էր քաղաք իջնել անհրաժեշտ նիւթերը զնելու համար:

18... թուին, երբ Կորսիկայ կղզու վրայ ճանապարհորդում էի, Պորտո-Վէքիօյի Մակիից կէս մղոն հեռաւորութեան վրայ գտնւում էր մի փոքրիկ տուն: Այդ տնակի նէրը Մաթէօ Փալիօնէն էր: Սա տեղացիների հասկացողութեամբ բաւականի ունեւոր մարդ էր: Սրա խաշները մի քանի հովիւների հսկողութեան տակ ազատ արածում էին լեռներում և տան կարիքները ամենայն կերպ լրացնում էին: Իսկ ինքը ապրում էր, ինչպէս վաջել է ապրել մի ազնուական մարդուն, անգործ, ազատ ու անհոգ:

Մաթէօն մօտ 50 տարեկան մի մարդ էր, ոչ այնքան բարձր հասակով, բայց ամուր կազմուածքով: Նորա մեծ քթով բարակ շրթունքներով և մեծ կենդանի աչքերով թուխ երեսը

ժածկուած էր, որպէս մի զլխարկով, սև դանդուր մազերի մի ահագին կոչտով:

Մաթէօն հուշակուած էր իբրև մի լաւ հրացանածիգ. այնտեղ, ուր ամենքը հէնց մանկութեան առաջին տարիներից վարժւում էին հրացանաձողութեանը, նրան համարում էին ամենավարժ ու փորձուած հրացանածիգ: Գիշերները նա կարող էր իւր հրացանը նոյնպիսի չաշողութեամբ դորձածել, ինչպէս և ցերեկը: Նրա այդ հուշակր տարածուած էր ամբողջ երկրում: Ամենքն այն կարծիքի էին, որ լաւ է նրա բարեկամը լինել, քան թէ թշնամին: Մաթէօն իւր շրջակայքի բոլոր հարևանների հետ ապրում էր միանգամայն հաշտ. և իսկապէս առիթ էլ չկար նրա հետ թշնամանալու, որովհետև նա զիտէր ամենքի հետ վարուել շնորհիւ իւր բարի, հեղ ու պատրաստակամ բնաւորութեանը: Ոչ մի աղքատ նա բաց չէր թողնիլ իրանից, մինչև որ իւր կարողացածին չափ օգնութիւն չտար նրան:

Սակայն խուլ լուրեր էին պատուում ժողովրդի մէջ, թէ Փալիօնէն, երբ ուղում էր հարսնութեան առնել ձիւղէպպէին, ոչնչացրեց իւր ախոյեանին՝ վերջինիս փեսացուին, որ նոյնքան քաջ էր և նոյնքան սիրում էր օրիորդին, որքան և ինքը: Գունէ Մաթէօյի ձեռքին

էին վերադրում հրացանի այն հարուածը, որից անշունչ գետին ընկաւ նրա սիրոյ ախոյեանն, երբ սա հանգիստ նստած պատուհանի մօտ, հաչելու առաջև ածիլում էր իւր երեսը:

Բայց այդ սիրային սպանութեան դործը մոռացութեան տրուեց շուտով, և Մաթէօն ամուսնացաւ: Ծիւղէպպէն ընծայեց իւր ամուսնուն իրար չետեից երեք այջիկ, որոնց ծնունդը կատաղութեան էր հասցնում հօրը. նա անպատճառ ուզում էր տղայ զաւակ ունենայ: Վերջապէս Մաթէօյի այս բաղձանքն էլ կատարուեց. ծիւղէպպէն ծնեց մի արու զաւակ, որի անունը Փօրտունատօ դրին:

Այդ զաւակն ընտանիքի յոյսն ու ապուէնն էր, հայրական անուան ժառանգը: Աղջիկները յաջողութեամբ ամուսիններ գտան և պսակուեցին. այնպէս որ Մաթէօն այժմս համարձակ կարող էր մեծ յոյսեր դնել իւր երեք փեսաների գանակների ու հրայանների վրայ, փեսանների, որոնք, պէտք է սսած, սիրով էին վերաբերում դէպի իրենց աները: Փօրտունատօն այն ժամանակ տասը տարեկան էր և շնորհիւ իւր խելացիութեանն ու աշխուժութեանը լաւ ապադայ էր խոստանում:

Մի անգամ, աշնանային մի առաւօտ, Մաթէօն պատրաստուեց իւր կնոջ հետ ճանա-

պարհուելու դէպի Մակին, որտեղ արածում էին նրա խաշները: Փօրրիկ Փօրտունատօն պաղատում էր, որ իրեն էլ վերցնեն հեաները: Բայց ճանապարհը հեռու էր և բացի այդ անհրաժեշտ էր տունը մէկի հսկողութեան տակ թողնել. ուստի հայրը բացասեց և Փօրտունատօյին պատուիրեց տանը նստելու:

Անցաւ մի քանի ժամ: Փօրտունատօն հանգիստ փռուել էր արեգակի տակ, նայում էր հեռում կապոյտին տուող լեռներին և անուրջների մէջ խորասուզւած երագում էր, թէ ինչպէս կիւրակի օրը կրգնայ քաղաք իւր մի հարուստ ազգականի մօտ ճաշելու:

Յանկարծ նրա քաղցը մտածմունքները խանգարուեցին հրացանների հեռաւոր որոսներից: Նա տեղից վեր թռաւ և սկսեց չորս կողմը դիտել, մանաւանդ դէպի հովիտը, որտեղից լսում էին հրացանների ձայները: Հրացանների որոտը փոքրիկ ընդմիջումներով դեռ շարունակւում էր և քանի գնում, այնքան մօտենում էր տարածութեամբ:

Վերջապէս դաշտավայրից դէպի Մաթէօյի տնակը տանող շուղի վրայ երևաց մի ճարդ, սրածայր գլխարկ հագած, որպիսին սովորութիւն ունեն կրելու կօրսիկացի լեռնականները: Նրա խիտ մօրուքը ծածկում էր երևալի

ներքին ծասր և ալիքներով բնկել էր կրճքի վրայ: Նրա հագուստն ամբողջապէս պատառուտած էր: Նա կազում էր և լենուած իւր հրացանի վրայ առաջ էր ընթանում շատ մեծ դժուարութեամբ. հրացանի զնդակը մտել էր նրա ազդրը:

Դա մի փախստական էր: Նա երեկոյեցի ի վեր իջել էր քաղաք վառօդ ու գնդակներ գնելու համար և ճանապարհին պատահել էր դարան մտած կորսիկացի հրացանածիգներին (սմբին*): Կատաղի կռուից յետոյ նրան յաջողուել էր ազատուել ու փախուստի դիմել, բայց զինուորները շարունակում էին նրան հետամուտ հայածել: Ստացած վէրքն էլ դժուարացնում էր գործը և չէր թույլ ապիս, որ ժամանակին նա կարողանար հասնել մակիին, որտեղ նա անկասկած միանդամայն ապահով կրգգար իրեն:

Փախստականը մօտեցաւ Թորտունատօյին և հարցրեց.

*) Կորսիկացի հրացանածիգներ են կոչուում այն զինուորները, որոնց տէրութիւնը մի քանի տարի առաջ յատկապէս նշանակել էր այդ կղզու վրայ ոստիկանական ու ժանդարմական վարչութիւններին օգնելու աւազակներին ու քաղաքական ոճրագործներին հալածելու համար:

— Դու Մաթէօ Փալիօնէի դաւանն ես:

— Այո:

— Ինձ կանչում են ձիանէթօ Սանպիերօ: Ինձ հետամուտ են լինում զինուորները: Շուտով ինձ թազցրու, ապաստան տուր. այլ ևս առաջ գնալու ոչ մի ոյժ չունեմ:

— Բայց ի՞նչ կասի ինձ հայրիկս, երբ ես քեզ թազցնեմ առանց նրա թույլատուութեանը:

— Նա կասէ, որ դու շատ լաւ վարուեցիր:

— Ես ի՞նչ գիտեմ:

— Դէհ, շուտ, թազցրու ինձ. զինուորներն արդէն վրայ են հասնում:

— Սպասիր մի փոքր, հայրիկս շուտով կրգայ:

— Սպասէ՛լ: Անիծուիս դու: Ձէ՞ որ հինգ բոպէից յետոյ այդ անդգամ զինուորներն այստեղ կլինեն: Թազցրու ինձ, ապա թէ ոչ ես քեզ կրսպանեմ:

— Քո հրացանը լցրած է, իսկ պատրօնաւոր դատարկ է. վրայ բերեց սառնասրտութեամբ Թորտունատուն:

— Բայց տես, որ ես դաշոյն ունեմ:

— Իսկ դու արդեօք կարո՞ղ ես ի՞մ չետեից հասնել. բացականչեց երեխան, մի քանի քայլ հեռու փախչելով ձիանէթօյից:

— Մի՞թէ դու թոյլ կրասս, որ ինձ այստեղ, ձեր տան շէմքում, ձերբակալին: Ոչ, դու Մաթէօ Փալկօնէի դաւակը չիս:

Մանուկը կարծես սկսեց տատանուել:

— Բայց դու ինձ ի՞նչ կրասս, եթէ ես քեզ թաղցնեմ. հարցրեց նա, մի քիչ ձօռնալով փախստականին:

Ճիւղնեթօն սկսեց քրքրել իւր պայուսակը, որ ամբարցած էր գօտուն, և հանեց աչնտեղից մի հինգ ֆրանկանոց դրամ, որով նա մտադիր էր փառօդ գնելու:

Տեսնելով փողը, Ծորտունատօն ուրախացաւ և, վերցնելով դրամը, ասաց Ճիւղնեթօնին.

— Ոչ մի բանից մի՛ վախենա՛ր:

Տնակի մօտը խոտի մեծ դէղ կար: Առանց երկար սպասելու Ծորտունատօն սկսեց դէղի մէջ փոս փորել, որի մէջ մտաւ Ճիւղնեթօն: Երեխան զղուշութեամբ կրկին ծածկեց խոտով այդ փոսը, ջրիւ տուեց խոտն այնպէս, որ ոչ մի կասկածի առիթ չտար և թողեց միայն փոքրիկ ծակ օդի համար: Բայց որպէսզի հեռացուէր ամեն մի կասկած, թէ խոտին ձևը է տուած, նա դիմեց հետևեալ խորամանկութեանը. վերջրեց կատուն իւր ծաղուկներով և տեղաւորեց նրանց խոտի վրայ: Այնուհետև նա ծածկեց հողով տան մօտ շաւ-

ղի վրայ նկատելի արեան մի քանի կաթիլներ և ապա միանգամայն հանգիստ սրտով փռուեց կրկին արևի տակ:

Կարճ միջոցից յետոյ Մաթէօյի տնակին մի սպայի հրամանատարութեան տակ մօտեցան 6 հողի, հազած մութ դոյնի նշանազգեստներ դեղին օձիքներով: Սպան Փալկօնէի հեռու ազդականներին էր. նրա անունն էր Թիօօրօ Գամբա: Սա յայտնի էր իբրև եռանդոտ մարդ, որ կարողացել էր բռնել շատ փախստականներ. այդ պատճառով վերջինները շատ էին վախենում սրանից և բնաւ չէին սիրում:

— Բարև, տղաս. բացականչեց սպան, մօտենալով Ծորտունատօնին: Էհէ՛, դու լաւ մեծացել էս: Ասա՛ խնդրեմ, այստեղից մի փոքր առաջ ոչ ոք չի՞ անցել:

— Բայց ես այնքան մեծ չեմ, որքան դուք. պատասխանեց երեխան պարզ կերպով, մեանալով, թէ իբր չի լսում հական հարցը:

— Ոչի՛նչ, դեռ էլի կրմեծանա՛ս: Բայց բանը նրանում չէ: Իսկ դու արդեօք չե՞ս տեսիլ չի՞ անցել այստեղով մի մարդ:

— Ձէ անցել այստեղով մի մարդ չի կրնա՞նք մանուկը:

— Այո՛. մի փոքր առաջ այստեղով անցել է անցնէր մի մարդ, որ հազած ունէր ար-

1002
680



Ճայր թաւշեայ զլխարկ և դեղին ու կարմիր կարով բանկոնակ:

— Մի մարդ, որ հագած ունէր սրածայր զլխարկ և դեղին ու կարմիր կարով բանկոնակ:

— Այո՛, հա՛: Պատասխանի՛ր շուտով և մի՛ կրկնիր իմ հարցերը:

— Առաւօտն այստեղով անցաւ մեր քահանան իւր ձիու վրայ հեծած — Պիէօրօն: Նա ինձ հարցրեց, թէ առողջ է հայրս և ես պատասխանեցի...

— Մ.յ, դու սատանա՛. բացականչեց Գամբան: Դու, երեխի, ուղու՞մ ես ինձ հետ խորամանկութիւններ բանեցնել: Պատասխանիր շուտ, ո՞ւր գնաց ձիանէթօն. մենք նրան որոնում ենք, և ես համոզուած եմ, որ նա գնում էր այս շաւղով:

— Իսկ այդ ո՞վ ասաց ձեզ:

Ինչպէ՞ս թէ ով ասաց: Ես ինքս այդ զիտեմ, և զիտեմ նաև, որ դու նրան տեսել ես:

— Բայց ես ո՞րտեղից կարող էի տեսնել, երբ քնած էի:

— Դու չէիր կարող քնել, սրիկայ: Նրացանների պալթիւնը պէտք է քեզ անշուշտ զարթեցնէր:

— Մի՞թէ դուք կարծում էք, որ ձեր հրացաններն այդպիսի մեծ աղմուկ են հանում:

Հօրս հրացանը աւելի մեծ աղմուկով է որոտում:

— Գրողը քե՛զ տանի՛, անիծած: Ես համոզուած եմ, որ դու տեսել ես ձիանէթօյլին: Գուցէ և դու նրան թաղըրած լինիս: Սպաս, տղերք, որոնեցէք, արդեօք այդ թափառաշրջիկը չի՞ թաղնուել այս տան մէջ: Ձէ՞ որ նա մի ոտի վրայ էր քարշ գալիս, և ես կարծում եմ, նա այնքան տխմար չէ՛, որ համարձակուէր մի ոտի վրայ կաղալով, մակի փախչել: Եւ արեան հետքերը վերջանում են այստեղ: Սպաս շո՛ւտ, ոչ մի վայրկեան մի՛ կորցնէք:

— Բայց ի՞նչ կասի հայրիկս, երբ իմանայ, որ դուք ներս էք խուժել մեր բնակարանն, երբ նա տանը չէր. հեղինորէն հարցրեց Փորտունատօն:

— Մ.յ, դու անպիտան. բացականչեց Գամբան, քաշլով երեխայի ականջը: Գիտե՞ս, որ ես կարող եմ ստիպել քո խօսքերի ձեւը փոխելու: Բաւական է մի երկու տասնեակ հարւածներ սրով, որպէսզի քո լեզուն բաց անեմ:

— Ի՞մ հօրս Մաթէօ Փալկօնէ են ասում — հպարտութեամբ պատասխանեց երեխան, շարունակելով չարամիտ կերպով հեզնել սպալին:

— Գիտե՞ս, դու փոքրիկ անպիտան, որ ես

կարող եմ քեզ տանել Կօրտէ կամ Բաստիա *)
 և այնտեղ բանտ նստեցնել, և դու շղթայա-
 կապ ընկած կրլինես դարձանի վրայ: Նոյն
 իսկ ես կրհրամայեմ գլուխդ կտրել, եթէ դու
 իսկոյն չասես, թէ որտեղ է ձիանէթօ Սան-
 պիէրօն:

— Այս ծիծաղելի սպառնալիքների առաջ
 երեխան սկսեց հռհռալ և կրկնում էր.

— Հօրս Մաթէօ Փալիօնէ են կանչում:

— Պարօն սպայ, փափսաց զինուորներից
 մէկը, թողէ՛ք, աւելի լաւ է չգրգռել Մա-
 թէօյին:

Գամբան մեծ դժուարութեան մէջ էր: Նա
 սկսեց կամացուկ խորհրդակցել զինուորների
 հետ, որոնք արդէն խուզարկել էին ամբողջ
 տունը: Սրա համար շատ ժամանակ հարկա-
 ւոր չէր, որովհետև Կօրսիկայի խրճիթները
 բաղկացած են ընդամենը մի սենեակից և շատ
 պարզ կահաւորած են. մի սեղան, աթոռ,
 սնդուկ, մի քանի սրսորդական ու անարա-
 բական անհրաժեշտ դործիքներ — ահա տան
 ամբողջ սարքն ու կարգը:

Մինչդեռ փոքրիկ Փորտունատօն փաղաք-
 շում էր կատուին և կարծես բաւականու-

*) Բաղաքներ են Կօրսիկա կղզու վրայ:

թիւն էր զգում, տեսնելով իւր ազգական
 սպայի ու զինուորների շփոթութիւնը:

Այդ միջոցին զինուորներից մէկը մօտեցաւ
 խոտի դէզին: Տեսնելով կատուին, նա ուսերը
 թափ տուեց, կարծես ցոյց տալով, որ այդ-
 անգ որոնելու ամեն մի փորձ միանգամայն
 սպարդիւն է համարում և անհոգ կերպով
 խրեց իւր հրացանի սուին դէզի մէջ:

Ո՛չ մի շարժում, ո՛չ մի նշոյլ, և երեխայի
 դէմքն էլ մնաց միանգամայն անյոյգ:

Սպան և զինուորները խիստ բարկացած
 էին իրենց անյաշդուլթեան վրայ: Նոքա ար-
 դէն աչքերը դարձրել էին դէպի հարթավայրը,
 կարծես որոշելիս լինէին վերադառնալու այն-
 տեղ, որտեղից եկել էին: Յանկարծ մեծաւորի
 մտքով անցաւ, երբ սա տեսաւ իւր ջանքերի
 սպարդիւն հետևանքը, փոխանակ սպառնա-
 լիքների ու հայհոյանքների, փաղաքշանքով ու
 ընծաներով կաշառել Փալիօնէի զաւակի տրա-
 մադրութիւնը:

— Լսի՛ր տղաս. ասաց Գամբան: Ես նկատում
 եմ, որ դու աշխոյժ մանուկ ես և շատ առաջ
 կերթաս: Սակայն ինձ հետ վատ խաղ ես խա-
 դում, և եթէ Մաթէօն իմ ազգականս չլի-
 նէր, որին ես չեմ ուզում դժգոհութիւն պատ-

Ճառելի, հաւատացած եղի՛ր, որ ես քեզ հետս կրտանէի:

— Մի՞թէ:

— Իսկ եթէ Մաթէան վերադառնայ, ես նրան ամեն ինչ կրպատմեմ և նա քեզ մի լաւ ձե՛ծ կրտայ, որ դու համարձակու՛մ ես ստեր խօսել:

— Ով դիտէ՛:

— Մէջ կրտենես: Բայց ահա թէ ինչ... եղի՛ր խելօք երեխայ, և ես քեզ մի որևէ ընձայ կրտամ:

— Բայց ես ձեզ, պարօն սպայ, կրտամ մի խորհուրդ: Շատ մի ծրգծդէք երկար. ձիանէթօն կրհասնի մակիին, իսկ նրան այնտեղ որօնելու համար հարկաւոր պէտք է լինեն մի քանի ձեզ նման քաջ երիտասարդներ:

Սպան զրպանից հանեց մի արծաթէ ժամացոյց իւր շղթայով, և, նկատելով, որ այդ բոպէին փոքրիկ Փօրտունատօյի աչքերը բորբոքուեցին, ասաց, բռնելով շղթայի ծայրից:

— Ի՛նչ է, անպիտան: Կ'ուղենայի՛ր այսպիսի ժամացոյց ունենալ: Դու այն ժամանակ հպարտ-հպարտ կըշքէիր Պօրտօ - Վէքիօյի փողօցներում, անցօրդները կրհարցնէին քեզ՝ «ո՞ր ժամն է», իսկ դու կրպատասխանէիր՝ «նայեցէ՛ք իմ ժամացոյցին»:

— Երբ ես մեծանամ, հօրեղբայրս ինձ կընձայէ մի ժամացոյց:

— Այ՛ն, բայց քո հօրեղբօրդ որդին արդէն ունի ժամացոյց, թէև ոչ այնպիսի գեղեցիկ, ինչպէս սա է, բայց տես, որ նա քեզանից փոքր է:

Երեխան հառաչեց:

— Հի՛, ինչպէս անենք: Յանկանո՛ւմ ես ստանալ այս ժամացոյցը:

Երեխան կողմնակի հայեացքով նայում էր ժամացոյցին: Նա այդ բոպէին նման էր մի կատուի, որի դնչին մօտեցնում են ամբողջ մի վառեկ: Հասկանալով, որ իրեն ծաղրում, գրգռում են, նա չի համարձակում թաթերը երկարացնել և յետ է շուռ դալիս, որպէսզի չենթարկուի գայթակղութեան. բայց միևնոյն ժամանակ նրա բերանի շրերը վաղում են և նրա դէմքը կարծես ասելիս լինի իւր տիրոջը՝ «ի՛նչ անողօք խաղ ես խաղում հետս»:

Բայց երևում էր, որ սպան միանգամայն անկեղծօրէն էր առաջարկում իւր ժամացոյցը:

Փօրտունատօն չբարձրացրեց իւր ձեռքը, բայց ասաց դառն հեղնութեամբ.

— Ինչո՛ւ էք ծաղրում ինձ:

— Տէր Աստո՛ւած: Մտքովս էլ չի անցնում

քեզ ծաղրելու: Ասա՛, որտեղ է ձիանէթօն, և ժամացոյցը բռնն է:

Թերահաւատութեան մի ժպիտ անցաւ երեսալի դէմքով: Սև աչքերը յառած սպալի վրայ, կարծես նա ճգնում էր դուշակել, կարելի՞ է արդեօք հաւատ ընծայել Գամբայի խօսքերին:

— Թո՛ղ ինձ պաշտօնազուրկ անեն, բացականչեց սպան, եթէ ես քեզ չտամ ժամացոյցը այդ պայմանով: Բո՛լոր ներկայ եղող ընկերներս վկայ են և ես իմ ասած խօսքիցը չեմ կանգնիլ:

Այդ ասելով, նա մօտեցնում էր ժամացոյցն աւելի և աւելի, այնպէս որ շղթան կամացուկ սահում էր երեսալի դարկացած այտերի վրայով: Փորտունատօյի դէմքի վրայ պարզ նշմարում էին ներքին յուզմունքի ալիքները. նրա սրտում կուում էին ազահուլթեան և հիւրընկալութեան պարտականութեան զգացմունքները: Նորա մերկ կուրծքը ծանր և ուժգին վեր ու վայր էր անում. նա, կարծես, շնչասպառ էր լինում: Իսկ ժամացոյցը դեռ ևս ճոճուում էր նրա աչքերի առաջ, շոյում նրա երեսը:

Փորտունատօյի աչ ձեռքը կամացուկ բարձրացաւ. մատի ծայրերը կպան ժամացոյցին.

ահա ժամացոյցն արդէն նրա ձեռքումն է, թէև Գամբան տակաւին բռնած ունի շղթայից: Ահա ժամացոյցի կապտադոյն ցուցակը... պրապղան նոր խուփը, արևի տակ վառվռում, փայլում են, ինչպէս կրակ... .

Գայթակղութիւնը խիստ մեծ էր:

Փորտունատօն բարձրացրեց ձախ ձեռքը և ցոյց տուեց ուսերի վրայով խոտի դէղի վրայ, որին ինքն յենուած էր: Գամբան հասկացաւ և ազատ թողեց շղթան: Փորտունատօն զգալով, որ ինքն է այժմս ժամացոյցի տէրը, այժի արագութեամբ վեր թռաւ և մի տասը քաջ հեռացաւ դէղից, որը զինուորները սկսեցին արդէն շտապով քրքրել:

Կարճ միջոցից յետոյ դէղի խոտը շարժւեց, և այնտեղ երեւաց արիւնլուալ մի մարդ դաշոյնը ձեռքին: Նա զուր էր ճգնում ոտքի կանգնել, վերքը խիստ թուլացրել էր նրան: Նա բարձրացաւ և իսկոյն վայր ընկաւ: Սպան յարձակուեց նրա կողմը և ձեռքից խեց դաշոյնը: Չնայած նրա ցոյց տուած զիմադրութեանը, նրան իսկոյն և ետ կապոտեցին:

Ճիանէթօն ընկած էր դեանի վրայ ձեռքերն ու ոտքերը կապած. նրա դարձրեց իւր գլուխը դէպի մօտեցող Փորտունատօյին:

— Անիծեա՛լ սերունդ. արտասանեց նա, և

նրա ծայնի մէջ լսուում էր աւելի առելու-
թիւն, քան թէ բարկութիւն:

Երեխան զցեց նրան այն դրամը, որ մի
փոքր առաջ ստացել էր նրանից. նա զգուժ
էր, որ այլևս իրաւունք չունի այդ փողն իւ-
րացնելու: Բայց ձիւնէթօն, կարծես, չնկա-
տեց այդ շարժումն և ստոնասիրտ կերպով
դարձաւ դէպի սպան.

— Սիրելի Դամբա՛, ես գնալու ոչո՛ք այլևս
չունեմ, և դուք ստիպուած պէտք է լինիք
ինձ ձեռքերի վրայ տանելու:

— Ա՛յ քեզ բա՛ն: Չէ՞ որ մի փոքր առաջ
մեղանից փախչում էիր վայրենի այժի արա-
դութեամբ. — կոշտ պատասխանեց սպան: Յա-
մենայն դէպս կարող ես հանգիստ լինել: Ես
այնքան դո՛հ եմ, որ գու վերջապէս ձեռքս
ընկար, որ երեւի ես ընդունակ կըլինեմ նոյն իսկ
իմ ուսերիս վրայ տանել քեզ մի ամբողջ մղոն
և ոչ մի յոգնածութիւն չզգալ: Բայց և այն-
պէս, սիրելիս, մենք քո վերարկուից և ծառի
ձիւղերից մի պատգարակ կըշինենք, իսկ Կրես-
պօլի ագարակում կըգանենք ձիեր:

— Շատ լաւ, պատասխանեց կալանաւորը.
Ճիայն պատգարակի վրայ մի քիչ խոտ զրէք,
որ ինձ մի փոքր չարմար լինի:

Մինչդեռ հրացանաձիւղներից ոմանք զբաղ-

ւած էին պատգարակի պատրաստելովը, իսկ
միւսները կապում էին ձիւնէթօլի վերքերը,
շաւղի վրայ հեռուում նշմարուեց յանկարծ
Մաթէօ Փալկօնէն իւր կնոջ հետ: X

Ճիւղէպպէն ընթանում էր շաղանակների
ահաղին բեռան ծանրութեան տակ կռացած,
մինչդեռ նրա ամուսինը թեթեւ ու հպարտ
առաջ էր դալիս զինուած երկու հրացանով.
մէկը ձեռքին բռնած, իսկ միւսը ուսից կա-
խած: Տեղական սովորութեան համեմատ տղա-
մարդու համար ամօթալի էր բացի զէնքից,
ուրիշ որևէ բան կրել:

— Արդեօք ինձ ձերբակալելու հօ չե՞ն եկել.
եղաւ Մաթէօլի առաջին մտածմունքը զին-
ւորներին նկատելով: Բայց ինչո՞ւ: Մի՞թէ նա
որևէ հին հաշիւներ ունի արգարագատու-
թեան հետ: Ոչ: Նա միանգամայն բարի համ-
բաւ էր վայելում և ոչ մի կասկածի չէր են-
թարկուել: Ճիշտ է, նա լեռնական էր և այն
չլ կօրսիկացի. իսկ սոցա մէջ շատ քէրը
կըգտնուեն, որոնք իրենց յիշողութեան մէջ
չպահէին մի քանի չնչին արկածներ՝ ինչպէս
օրինակ՝ դաշոյնի հարուածներ, հրացանի զար-
կեր և այլն: Բայց Մաթէօլի խիղճը մաքուր
է. տասը տարուց աւելի է, որ նրա հրացանի
փողը ոչ մի մարդու դէմ ուղղուած չէ եղել:

Սակայն Մաթէօն զգոյշ էր և յարժար դատեց ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առնել:

— Ա՛ կնիկ, դարձաւ նա ձիւղէպպէին՝ բեռը վայր դի՛ր և յամենայն դէպս պատրաստուի՛ր:

Նա իսկոյն և ետ հնազանդուեց: Այն ժամանակ Մաթէօն յանձնեց նորան իւր ուսից կախ ընկած հրացանը, որ խանդարում էր ազատ շարժուելուն, բարձրացրեց չախմախը և կամաց շարժուեց դէպի տնակն, ընթանալով ճանապարհի եզերքին բուսած ծառերի կողքով: Ամենաչնչին թշնամական շարժման ժամանակ նա հնարաւորութիւն ունէր թաքնուել որևէ ծառի բնի յետեր և այնտեղից հրացանի զնդակներ լծափել: Ձիւղէպպէն զնում էր նորա յետեից և կրում էր միւս հրացանն ու պատրօնտաշը: Չէ՞ որ հաւատարիմ կնոջ պարտաւորութիւնն է կռուի ժամանակ իւր ամուսնու հրացանը լցնել:

Մաթէօն, որ այդպէս զգուշութեամբ և քայլ առ քայլ առաջ էր ընթանում հրացանը ձեռքին պատրաստ, մեծ անհանդստութիւն պատճառեց Գամբային:

— Ի՞նչ կրլինի մտածում էր սպան, եթէ Մաթէօն յանկարծ ձիանէթօյի աղգականը

կամ ընկերը լինի և վճռէ նրան պաշտպանել: Այն ժամանակ մեղանից երկուսը անպատճառ կրստանան նրա երկու զնդակը և եթէ մանաւանդ, չնայելով որ ես Մաթէօյի աղգականն եմ, այդ զնդակներից մէկը նա որոշէ ինձ համար...

Չգալով, որ անհրաժեշտ է դուրս գալ այս անելանելի վիճակից, Գամբան վճռեց քաջութեամբ որսորդին ընդառաջ գնալ և պատմել նրան ամեն ինչ, իբրև իւր հին բարեկամին: Բայց եթէ մէկը կարողանար հասկանալ, թէ ինչպէս երկար թուաց խեղճ սպային այն փոքրիկ տարածութիւնը, որ բաժանում էր նրան Մաթէօյից:

— Ա՛, հին ընկերակից, բացականչեց նա. ի՞նչպէս են քո դորժերը. ճանաչում ես ինձ, ես Գամբան եմ, քո աղգականը:

Մաթէօն լուռ կանգնեց, երբ սա ահօսաւ, որ սպան ոչ մի թշնամական միտումներ չունէր, բարձրացրեց հրացանի փողը դէպի վեր:

— Բարև քեզ եղբայր, ասաց Գամբան, երկարացնելով իւր ձեռքը: Որքան ժամանակ է մենք չենք տեսնուել:

— Բարև եղբայր — Պատասխանեց Մաթէօն:

— Ես ճանապարհից շեղուեցի ձեզ այցելու-

Թեան գալու նպատակով: Մենք այսօր ստիպ-
ւած էինք երկար ճամբայ կտրելու: Սակայն
զուր տեղը չենք յօգնել, չող աւար ունենք:
Այս բոպէիս բռնեցինք ձիանէթօ Սանպիե-
րօյին:

— Եւ փառք Աստուծոյ, բացականչեց ձիւ-
ղէպպէն, այդպէս էլ հարկաւոր էր. անցեալ
շաբաթ նա մեզանից մի այժ գողացաւ:

— Խեղճը երևի անօթի էր. նկատեց Մա-
թէօն:

— Անպիտանը որպէս մի առիւծ էր պաշտ-
պանուում. շարունակում էր Գամբան, թեթե
բարկանարով Մաթէօյի նկատողութիւնից. նա
սպանեց իմ զինուորներից մէկին և այդ բա-
ւական չէ կտտրեց նաև Շարդօնի ձեռքը. այ-
նուհետև նա այնպէս թագնուեց, որ ստտա-
նան էլ չէր գտնի: Եթէ Փօրտունատօն չլինէր,
ես նրան երբէք չէի գտնի:

— Ի՞նչպէս, Փօրտունատօն — բացականչեց
Մաթէօն:

— Փօրտունատօն — կրկնեց ձիւղէպպէն:

— Այո. ձիանէթօն թաղնուել էր այս դէպի
մէջ, և մեր փոքրիկը ցոյց տուեց նրա տեղը:
Ես անշուշտ այդ կասեմ նրա հօրեղբորը, թող
նա նրան մի լաւ բնծայ տայ: Բացի այդ՝ թէ՛

Փօրտունատօյի և թէ՛ քո մասին ես իմ զե-
կուցման մէջ կրչիշեցնեմ դատախաղին:

— Անէ՛ծք, կամացուկ շնչաց Մաթէօն:
Այսպէս խօսակցելով, նոքա մօտեցան զինուոր-
ների խմբակին, որոնք պատրաստուել էին
շարժուելու: ձիանէթօն արդէն տեղաւորուած
էր պատգարակի վրայ: Սա տեսնելով, թէ
ինչպէս Մաթէօն ու Գամբան խաղաղ գրու-
ցում էին իրար հետ, տարօրինակ ձևով հեգ-
նորէն ծիծաղեց: Այնուհետև նա դարձրեց իւր
զուլսը դէպի տուն և թքելով նրա շէմքի
վրայ բարձր ձայնով բացականչեց.

— Մատնիչի տոննր:

Միայն մեռնելու վճռականութեամբ պատ-
րաստ մարդը կրչանդգներ անուանել Փալիօ-
նէին «Մատնիչ»: Իաշոյնի շեշտակի հարուածը
կրլինէր այդպիսի յանդուգն հայհօյողի համար
արժանի պատասխանը: Մինչդեռ Մաթէօն
տեղից չշարժուեց: Միմիայն նրա ձեռքը կա-
մացուկ բարձրացաւ դէպի ճակատը. դա երն-
շուած, ստորացած, խղճմտանքից հալածուող
մարդու մի շարժում էր:

Տեսնելով մօտեցող հօրը, Փօրտունատօն
մտաւ սենեակը: Նա այնտեղից շուտով դուրս
եկաւ մի գաւաթ կաթը ձեռքին և, աչքերը
խոնարհելով, մատուցեց ձիանէթօյին:

— Տե՛ղ ինձանից, որոտաց կալանաւորը
և, Կառնալով Կէպի զինուորներից մէկը, ար-
տասանեց.

— Ընկէ՛ր, տուր ինձ ջուր խմելու:

Զինուորը առաջարկեց նրան իւր ճանա-
պարհորդական շիշը, և կալանաւորը սկսեց
ջուր խմել այն մարդու ձեռքից, որի զէմ մի
բանի ժամ առաջ արիւնահեղ կռիւ էր մղում:

Ծարաւը կոտրելուց չեառչ, նա խնդրեց, որ
իւր ձեռքերը կապեն ոչ թէ մէջքի, այլ կրծ-
քի վրայ:

— Ես սիրում եմ, ասաց նա, պարկել որ-
քան կարելի է հանդիստ:

Նրա ցանկութիւնն աճապարեցին կատա-
րել. սպան այդ միջոցին հրաման արձակեց
ճանապարհ ընկնելու, մնաք բարև ասաց Մա-
թէօնին, որը այդ ողջօնին ոչ մի պատասխան
չըտուեց:

Անցաւ տասը րոպէ. Մաթէօն շարունակ
լուռ էր: Փորտունատօն յուզուած նայում էր
մերթ մօրը, մերթ հօրը, որ հրացանի վրայ
չենուած իւր բարկացկոտ հայեացքը բւեռել էր
որդու վրայ:

— Դու շատ լուռ ես սկսել, վերջապէս ար-
տասանեց կամաց ձայնով Մաթէօն: Նրա ձայնը
Հանգիստ էր. բայց ով որ ճանաչում էր Մա-

թէօնին, նա կրհասկանար, թէ ի՞նչ վասնդ էր
ներկայացնում այդ հանգստութիւնը:

— Հայրի՛կ, բայականչեց Փորտունատօն ար-
տասուքն աչքերին և պատրաստ հօր սուքերն
ընկնելու:

— Մի՛ ձօտենար ինձ. գոռաց Մաթէօն և,
երեսան հեկեկալով սառած կանդ առաւ մի
բանի բալլ հեռաւորութեան վրայ:

Այդ րոպէին ձիւզէպպէն ձօտեցաւ: Սա
նկատեց ժամացօցի շղթան, որի ծայրը երե-
ւում էր Փորտունատօնի շապկի տակից:

— Ո՞վ տուեց քեզ այս ժամացօցը. խստո-
րէն հարցրեց մայրը:

— Ինձ դա տուեց Գամբան. պատասխանեց
երեսան:

Փաղօնէն խլեց ժամացօցը երեսայից և,
ամենայն ոչժով նետելով դետին, փշուր-փշուր
արեց:

— Ա՛ կնիկ, արտասանեց նա. սա ի՞նչ որ-
դին է:

ձիւզէպպէի թուխ այտերը կարմրեցին:

— Հասկան՞ում ես, Մաթէօ, թի՛ ի՞նչ ես
ասում, և ո՞ւմ հետ ես խօսում:

— Մեր սերնդի մէջ էրբէք դաւաճաններ
չեն եղել. այս երեսան առաջինն է:

Փորտունատօնի հեկեկանքը բանի զնում մե-

Ճանուճ էր, իսկ Փաղփօնէն տակաւին չէր հե-
ռացնում զաւակի վրայից իւր բեւռած, ան-
թարթ հայեացքը:

Վերջապէս Մաթէօն հրացանի կոթը ուժ-
ղին զարկեց դեանին, վերցրեց հրացանն ուսի
վրայ և զիմեց զէպի անտառի թաւուտ ատերը,
հրամայելով Փօրտուենատոյին իրեն հետեւել:
Երեխան լուռ հպատակուեց:

Ճիւղէպպէն վրայ հասաւ ամուսնուն ու
բռնեց նրա ձեռքը:

— Մաթէօ, սա քո զաւակն է, չիշի՛ր այդ-
արտասանեց նա զողբօղուն ծաչնով, նայելով
իւր սև աչքերով ամուսնու աչքերին, կարծես
ճգնում էր կարդալ այնտեղ, թէ ի՞նչ է կա-
տարուում նրա հոգու խորքում:

— Թո՛ղ ինձ հանգիստ, — պատասխանեց
Մաթէօն. — այ՛՛, ես գիտեմ, որ ես նրա
հայրն եմ:

Ճիւղէպպէն գրկեց իւր որդուն և հեկեկա-
լով դնաց տուն: Այնտեղ, նա ընկաւ Աստ-
ւածածօր պատկերի առաջ և բորբոքուած
սրտով աղօթում էր:

Մինչդեռ Մաթէօն, երկու հարիւր քալլ
անցնելով, կանգ առաւ ծի խոր ձորի մէջ: Նա
հրոցանի կոթով փորձեց գեանի կարծրու-
թիւնը. նա փխրուն էր և կակուղ: Այդ ատերը

նա գտաւ շատ չարմար իւր մտադրութեան
իրադործման համար:

— Փօրտուենա՛օ, զնա՛ այնտեղ, մեծ քարի
մօս:

Երեխան կատարեց հօր հրամանը և ծունկ
չօքեց:

— Աղօթի՛ր:

— Վհայրի՛կ, ինձ մի՛ սպանէք:

— Աղօթի՛ր. զողաց սոսկալի ծաչնով հայրը:
Երեխան հեկեկալով սկսեց շշնշալ աղօթքի
խօսքերը: Նա ասաց «Նաւատածքը» կի սպա
«Նայր մերը»: Նայրը ամեն մի աղօթքի վերջը
հաստատ ծաչնով արտասանում էր. «ամէն»:

— Դա բոլ՞որ աղօթքներն են, որոնք զու-
գիտե՞ս:

— Նայրիկ, ես գիտեմ նաև Ave Maria - ն
և մի աղօթք ևս, որ ինձ սովորեցրել է մօ-
րաբօրս:

— Դա շատ երկար է. բայց ոչի՛նչ, ասա՛:
Մանուկը թուլացած ծաչնով արտասանեց
և այս վերջին աղօթքը:

— Դու վերջացրի՛ր:

— Նայրի՛կ, հայրի՛կ, ների՛ր ինձ: Ես այլևս
այդպէս չեմ վարուի: Ես կ'աղաչեմ և այնպէս
կրթնդրեմ Գամբային, որ ձիանէթօն ինձ
կրնե՛րէ...

Երեխան զեռ էլի խօսում էր. Մաթէօն
բարձրացրեց հրացանը և, ուղղելով, նշան
դրեց իւր օրդու վրայ ու արտասանեց.

— Թո՛ղ Աստուած ներէ՛ քեզ:

Վերջին յուսահատ յուզմունքի մէջ երեխան
բարձրացաւ տեղից, ուղում էր հօր ոտքերն
ընկնել, բայց չկարողացաւ... ուշ էր:

Սրտոսաց հրացանը, և Փօրտունատուն ան-
շունչ ապալուեց զեօին:

Մաթէօն բնաւ չնայեց զիտի վրայ, վերա-
դարձաւ տուն բանք բերելու, օրպէսզի օրդուն
թաղէ: Նազիւ թէ մի քանի քաջ էր արել,
էրբ նկատեց ձիւզէպպէին: Սարսափելով հրա-
ցանի ճայթիւնից, նա փազում էր իւր ամուս-
նուն ընդառաջ:

— Ի՞նչ արի՛ր, Մաթէօ, — բացականչեց մայրը:

— Ես նրան պատժեցի:

— Ո՞րտեղ է նա:

— Զօրակի մէջն է... Նարկաւոր է նրան
թաղել... Նա իբրև քրիստոնեայ մեռաւ:

ՄԱՏՆԻՉԸ

(Պատմութիւն Բիլտրամելիի):

Մերունի հովիւ Բիմուէլըն ասաց Բիա-
րուն. — Եթէ այս զիշերներեց մէկում, Սու-
րէլը զուռ պաղխէ, բաց արձ և նրան ապաս-
տան տուր. նրա գլխին փորձանք է կկել:

— Ի՞նչ է պատահել. հարցրեց Բիարուն,
հազիւ բարձրացնելով իւր շիւ աջքերը ծերուկի
վրայ և ապա իսկոյն դարձնելով զէպի եր-
կինք:

— Անցեալները Սուրէլը անպատուեց Զին-
տիլին — շարունակում էր Բիմուէլըր: Նոքա
պատահեցին իրար անտառում. կռուի բռնուե-
ցին. ոչ ոք չկար, որ նոցա բաժանէր: Եւ անա
Սուրէլը այնպէս յաջող խրեց իւր դանակը
Զինտիլի մարմնի մէջ, որ սա տեղն ու տեղը
հոգին փչեց:

— Ոչ ոք բան չգիտէ:

— Կարծում եմ, որ ոստիկանները կասկա-
ծաւ են Սուրէլի վրայ, բայց բռնել սրան
նրանց չի յաջողուել:

— Բայց կարող է մէկը դուրս դալ և մատնել. վրայ բերեց Բիարուն զառն ժպիտով:

— Լրտեսութեան սերմերը երբէք մեզանում արմատներ չեն զցել. ասաց Բիմուէլըը նակատը կնճռած:

— Սակայն ես զիտեմ, կայ մէկը, որ ընդունակ է այդ անելու. պատասխանեց Բիարուն:

— Ո՞վ է այդ:

— Ես ձեզ կ'ասեմ, եթէ այս անգամ էլ նա փորձէ փող աշխատել, օգտուելով ուրիշի անել զըութիւնից:

— Զորջ հա՛, եթէ դու համարձակուեցիր նրան գողտնի պահել... որոտաց Բիմուէլը:

Բիարուն ուղղահայեաց բարձրացրեց իւր ձեռքերի թաթերը 'ի նշան ատելութեան և ոչինչ չպատասխանեց: Ծերուկը դարձրեց իւր աչքերը դէպի մթնոյ հորիզոնը, Ամենկկի բարձր լեռների լեռեր, նայեց դէպի խաւար հովիտը, որ լի էր մելամաղձիկ կարկաչող փտակներով, այնուհետև ուղղեց իւր քայլերը դէպի լաստենու անտառակն, ուր արածում էին նրա սպիտակ ոչխարները, և անչալտացաւ:

Բիարուն շարունակում էր իւր ճանապարհը Մծնակ Ապերտօջի ուղղութեամբ, որտեղ դարն-

ւում էր մոխրագոյն քարերից կառուցած նրա խրճիթը:

Օչիւմի տափարակի վրայ նա նկատեց արտ վարողին, որ չետացել էր իւր դաժան աշխատանքից:

Լծի տակ կռացած երեք զոյգ եղների մօտով դնում էր մի թուլակազմ երէխայ, որը բարակ նիպտով դուրս էր քաշում բառաչող անասունների ծուլացած ուժը և կանչուում նոցա վերայ: Գիշերամուտի լուսթեան մէջ բարձր հնչում էր նրա մանկական ձայնը:

— Բի՛ն... Բօ... զնա՛ ախօսի վրայով, հողը կանրծր է:

Նոզադորժը քայլում էր չեռեից, լուռ ու մունչ զիտելով, թէ ինչպէս խփի երկաթը խրում է անպտուղ և կոշտ դետնի մէջ. նա անշարժ կռանում էր գութանի վրայ, կարծես թէ ամեն մի դարկի հետ աւելի ուժգին էր լինում նրա վրայ:

Բիարուն սկզբում չկարողացաւ առկաջող վերջալուսի կապտաւուն փայլի մէջ ճանաչել երկրագործի գէմքը. բայց երբ վերջինս դարի միջոցին կամաց ուղղուեց և կանգնեց տափարակի մէջտեղում, աչք ածելով վարած հողի վրայ, մօտեցողը իսկոյն ճանաչեց Բուվէրի, իւր հարեանի, գիմագծերը:

— Ապերտիտ հոգ, բացականչեց Բիարուն
աւելի ծօանալով:

— Չէ՞ որ չորս շերտ աղոսներն ընկած են
լաւ արեւի տակ և պէտք է տասր հոգու
համար բաւական սնունդ տալին, պատաս-
խանեց ծի փոքր լուսթիւնից չեաոյ Բու-
վէրր. մինչդեռ այդ աղոսները չեն կշտացնի
նոյն իսկ մէկ հոգուն:

— Միայն խաղողի այգին կարող է լաւ ար-
դիւնք բերել:

— Ճիշտ է, բայց մենք անոոր ենք դուրս
պրծնելու աղքատութեան ճիրաններից: Սա-
կայն իմ մտքերն ու խոհերը տանս պատերից
հեռու չեն գնում, աւելացրեց զիւղացին. իսկ
ինչ որ այդ պատերից դուրսն է, զրա մասին
կրհոգայ ինքը Տէր Աստուած:

— Դուք շարունակում էք աշխատանքը
նաև լուսնի միջոցի՞ն. — հարցրեց Բիարուն:

— Այո՛. գիշերն այնքան դժուար չէ վարել
այս հողը: Լուսինը բաւականանում է միայն
նրանով, որ նայում է երկնքից. նա չի աչ-
րում:

— Իսկ ձեր կինը միայնակ տանն է, երե-
խաների հետ:

— Միայնակ, իւր կարիքների հետ. ժպտա-
լով պատասխանեց Բուվէրր:

— Իսկ եթէ նրա վրայ վախ դալ. չէ՞ որ
այս կողմերը թափառում է աւազակը:

— Գիտեմ: Դուք ասում էք Սուրէլի մասին,
այնպէս չէ՞:

— Այո՛, ես դորա մասին եմ ասում:

— Նա երեկ երեկոյեան իմ դուռը ծեծեց,
և ես բաց արի: Տասն օրուայ տանջանքները
նրան մաշել էին և դարձրել մարդկային մի
ստուեր: Որդիքս խղճացին նրա վրայ և մի
փոքրիկ տեղ տուին նրան իրենց անկողնու
վրայ:

— Նա գեռ էլի՞ ձեզ ծօա է:

— Այո՛. թող ապրի, որքան կուէէ: Բայի
այդ, զիտէ՞ք, Բիարու, որ այնտեղ, ուր հա-
րստանալու ոչ մի յոյս չկայ, մարդիկ չեն վա-
խենում և աւերումից: Իսկ տարուայ այս ժա-
մանակը ես այնքան հաց ունեմ, որ բաւական
կ'անի մի աւելորդ բերանի համար է:

Նօքա լռեցին: Ամենկկի անասունների չեաւը,
Սլբիական լեռների գառիվայրերի վրայ երե-
ւում էր կարմրագոյն լուսինը, որը կարծես
դուրս էր գլորուել անտառի թաւուա մթու-
թիւնից: Իսկ Մօլէնայի հեռաւոր լեռների
վրայ զեռէս վառուում էր արեգակի մարուող
ցոլքը, որի մէջ, շնորհիւ օդի անսովոր թա-

փանցիութեանը, նշմարուած էին բարձրացող ծխերի բարակ շերտիկները:

Հարեանները, իրար ըստ սովորութեան բարի գիշեր բարեմաղթելով, բաժանուեցին: Բիարուն շարունակուած էր ճանապարհը դէպի տուն, որ գտնուած էր մօտակայում, մինչդեռ դաշտավայրի վրայ տակաւին շարունակուած էր հրնչել երեխայի կարուկ ծայնը, որ զրկուած էր ծանրաշարժ եզներին:

Միւս օրը Սուրէլին ոստիկանները գտան իւր լեռնային թաքուստի բնակարանում և տարան հարեան քաղաքը:

Մեծ էր լեռների բնակիչների յուզմունքը:

Նոքա գիտէին, որ Սուրէլը ազատ կրճնար բանտից ու պատժից՝ եթէ իրենց մէջ չգրտնուէր մի զազրելի մասնիչը:

Գիտելու մօնի օրը շրջակայքի բոլոր ծերերը խորհրդի էին հաւաքուել: Այլտեղ եկաւ Բիարուն և մի կողմն առանձնացնելով ծերունի հովիւ Բիմուէլիին, շնչաց նրան.

— Ես չէի ասում ձեզ, որ մէկը կրճատնի ոճրագործին: Ահա, տեսնում էք, որ իմ ասածիս պէս եղաւ:

— Անիծում եմ քեզ անովի - տեղովի, խրտորէն բացականչեց Բիմուէլը. ասա՛ նրա

անունն, ապա թէ ոչ դու էլ կրդառնաս մատնիչի ընկերակից:

— Ես ոչ որին չարիք չեմ ուղում հասցնել:

— Ով որ զրկուած է մարդուն ազատութիւնից, նա երբէք իրաւունք չունի կարեկցութիւն սպասելու: —

— Ճիշտ է, մրթմրթաց Բիարուն: Յետոյ նա կորացրեց իւր շի աչքերն և սև զգզուած մազերով զլուխը:

— Ասա՛ վերջապէս, շարունակուած էր պնդել Բիմուէլը:

— Այն երեկոյ, երբ ես բաժանուեցի ձեզանից, իմացայ, որ Սուրէլը թաղնուած է մեր լեռներում, մի խրճիթում, որն ինձանից ոչ այնքան հեռու էր: Բրուվէրը յայտնեց ինձ, որ երկու օր առաջ նա նրան իւր մօտ ապաստան էր տուել: Գիշերը, զուրս գալով ամանից հողերս վարելու համար, ես տեսայ Բուվէրին: Սա Վաղէվազ շտապուած էր այն շառաւիղներով, որոնք տանում են դէպի մեծ ճանապարհը:

— Դու կարո՞ղ ես քո ասածներդ խղճիք ծայնով հաստատել:

Բիարուն իւր ձեռքը զրեց սրտին և շարունակեց.

— Երդե՛ս եմ Քրիստոսի խաչով:

Եւ ծերունիները իմացան այս ախրալի նո-

բուժիւնը: Նորա անիծեցին թշուառ զիւղա-
ցուն և ենթարկեցին սոսկալի պատժին. ոչ ոք
չհամարձակուի խօսել ու շփուել մասնիչի
հետ. նա դատապարտուած էր այսուհետև
ապրելու համար մարդկանց մէջ:

Պատիժը սկսուեց: Սկզբներում Բուլէրը
չէր նկատում այդ: Նա մի հոտարակ, տգէտ
մարդ էր, կոպիտ, որպէս սոճու կեղևը. նա
ճանաչում էր միմիայն իւր մարմինն և սրա
ստուէրը, հողն ու արեղակը: Նա ընթանում
էր իւր քարքարոտ ճանապարհով, երբէք չետ
չնայելով: Տասը աղերսապին ձայներ էին հըն-
չում միշտ նրա ախանջին և հաց պահանջում,
նա ստիպուած էր ամեն անգամ արև տեսնե-
լիս մի ափ մնունդ գտնել նրանց համար,
որոնք ծնուել էին իւր սլոխից: Առաջի ժամա-
նակն ընկերների լսութիւնը նրան չէր դար-
ձացնում. նա ինքն էլ սակաւախօսի մէկն էր,
չէր սիրում երկար զրույցներ: Բայց երբ նորա
հայհոյանքներով յետ էին դարձնում իրենց
երեւները նրանից և մերժեցին մի անգամ օգ-
նութեան գալ, հակառակ տիրապետող եղ-
բայրական սովորութեանը, որ տիրում էր այդ
լեռնական զիւղացիների մէջ, թշուառ Բուլէրը
չուէր իւր աչքերը և, սարսափելով այդ անա-
չընկալ զէպքից, հարցրեց:

— Բայց ի՞նչ եմ ձեզ արել:

Նա ոչ մի պատասխան չստացաւ և շատ
ամգամ միայնակ առանց մի կտոր հացի վե-
րադառնում էր իւր վաչրենի օթեանը: Մի
անգամ նա նստած էր իւր խրճիթի շէմքում և
տեսաւ Բիարուին, որ անցնում էր մտովը:
Երկու անգամ բարձր ձայնով նա կանչեց
նրան, բայց վերջինը ձեացաւ այնպէս, թէ
իբր չէր լսում և շարունակում էր իւր ճանա-
պարհը: Այն ժամանակ Բուլէրը վազեկազ ա-
ռաջ վազեց:

— Խլացել էք, ինչ է. բացականչեց նա
Բիարուին:

— Ի՞նչ էք ուզում ինձանից:

— Ոչինչ ձեր զոռոզութիւնից: Բայց ասա-
ցէք ի սէր Աստծոյ, ի՞նչ պատճառով դուք և
բոլորդ ինձանից խուսափում էք, որպէս մի
բորոտից և ինչո՞ւ ոչ ոք ձեզանից այլ ևս չի
ուզում ճանաչել ոչ ինձ և ոչ էլ իմ տունն
ու ընտանիքը:

— Չգիտե՛մ:

— Գուցէ՛ դուք զզուում էք իմ չքաւորու-
թիւնից. բայց Աստուած է վկայ, ես ոչ ոքից
նոյն իսկ մի հասիկ ցորէն չեմ զողացել, բայց
իմ երկու զաւակներս սովածութիւնից մե-
ռան:

— Երկրիս վրայ բոլորիս վիճակը միևնոյնն է, բացականչեց Բիարուն:

— Ասա՛, ո՞վ ինձ չարախօսեց, երբուի՛ր քո ննջեցեալների հոգիներով. կանչու՛մ էր ԲուՎէրը այլայլուած:

Բիարուն, այդ հրէշաւոր մարդը, դեղնաերես ու շիւ աչքերով, կախ գցեց իւր գլուխը, չկարողանալով տանել իւր ընկերոջ հայեացքը և միայն կեղծ լալապին ծայնով կրկնում էր.

— Ես ոչի՛նչ չգիտեմ:

Վերջապէս ԲուՎէրը, չկարողանալով այլևս տանել իւր զրացիների այդ տեսակ վերարբուածն գէպ իրեն և ընկճուելով ընկերների անբացատրելի արհամարանքից ու ծանր պատժից, դիմեց ծերունիներին. սա աղերսեց, որ նոքա մի անգամ գոնէ խղճան իրան ու լսեն իւր բացատրութիւնները, նախ քան որ ինքը իւր ընտանիքի հետ միասին կտորուտի սառնամանիքից, ողջ - ողջ թաղուած մնալով ամենքից հեռու, ձմեռուայ բքի տակ:

Փողոզը նշանակուած էր Կա - դի - Աբիտում, Ալբի լեռներում, և ծերունիները հաւաքուեցին այնտեղ, բարձրանալով լեռնային արահեաներով:

Երբ ԲուՎէրը երևաց անտառի ծալքից, բոլորը իրենց դէմքերը դարձրին դէպի նա: Նա

վազում էր հեւալով, գունաթափ, աչքերը դուրս ընկած, զլխաբաց, նրա մարմինը հազիւ ծածկուած էր պատառոտուն լաթերով, որոնք ծածանուում էին սառն քամուց: Ծերուկներն իրար նայեցին, և Ռիմուէլը շնչաց. « Կատարեալ մեռե՛լ »: Մնացեալները լուռ ու մունջ թափ տուին զլուխները, համաձայնուելով նրա հետ:

Գիւղացին առատութեամբ վազեց և կանգնեց հրապարակում մի քանի քայլ հեռաւորութեան վրայ նրանցից; որոնք նրան այդ րոպէին դատելու էին: Նրա ծնօտներն ու շրթունքները զողզողում էին. նա նմանում էր մի դիակի:

— Ես ուշացայ ժամանակին գալու, սկսեց նա. որովհետև վախճանուեց իմ մի զաւակն ևս: Արդէն երեք որդիներս մեռան այն միջոցին, երբ դուք չգիտեմ ինչ պատճառներից դրդուած ինձ ենթարկել էիք զաժան պատժին: Դուք ինձ զրկեցիք ամեն ինչից, և ես ուզում եմ իմանալ, թէ ի՞նչ պատճառով:

Նրա ձայնը դուրս էր դալիս կրծքից խրոպոտ, ժանտ որպէս մրրկածուփ հողմը և խրոխա ու տխուր զգգում էր հաւաքուած ծերերի զլխներին: Այն ժամանակ Ռիմուէլըն ստաց.

— Դու խախտեցիր հիւրասիրութեան օրէնքները:

Բու վէրի աչքերը փայլատակեցին չանկարծակի կայծակի նման և նա կտարատու՞մ էր իւր ջղացիկ սեղմած ձեռքերը:

— Իսկ ի՞նչ, հնչեց նրա պատասխանը:

— Դու փողի համար լրատես դարձար, խիստ ծայնով շարունակեց ծերունի հովիւր. դու դաւանանցիկ քո անուանն ու քո ժողովրդին, դու քո որդիներին միայն խաչատառակութեան ժառանգութիւն թողի՛ր, և դիւղի մեծաւորները քեզ խնայու՞մ են լոկ քո անմեղ զաւակների համար:

Բու վէրը կարծես սառել-կարկամել էր վրշտոտ անշարժութեան մէջ, մինչդեռ ծերուկի ծայնը հանդարտ վեհութեամբ մի առ մի թւում էր այն բոլոր մեղքերը, որոնք առանձնացրին նրան իւր հարեաններից, այն մեղքերը, որոնք նրան դարձրին մի առեւի, զազրելի անասուն, որից խորշում են բոլոր խրատաբարոյ, իրենց հին պապենական օրէնքներին հաւատարիմ մնացած մարդիկը: Գիւղացին կանգնած էր ծերունիների անողոր ժողովի առաջ, որպէս մի դժբաղդ, հողմից մի լճանուած, որը գրեթէ անդգայաբար փրկութիւն

է որոնում տարերբային վտանգի սարսափներէ մէջ:

Նա չխոնարհեց իւր գլուխը, գետնին չդարձրեց իւր գորշագոյն աչքերը, որոնք չառած էին դատաւորի վրայ. միմիայն դողողացին նրա դժգոյն երեսի մկանունքները, երեսի, որի վրայ կարծես իջել էր մուսոն օրուայ ստուէրը:

Տիրեց խորին լուռութիւն: Բու վէրը փորձում էր խօսելու, սակայն նրա կոկորդից լոկ խրատ կոչիւններ էին դուրս ցայտում: Ոմայնք ծերունիներից մտախօս ու կասկածաւքից ընկճուած նայում էին գետնին: Վերջապէս բունց ցասկոտութեամբ, որի մէջ մի քանի բառերով արտաւիժուած է ամնչուող մարդու ամբողջ հողին, դատապարտուածը ձայնեց.

Ես ապաստան տուի ձօտս Սուրէլին: Իմ մեռած ու կենդանի երեխաներիս հողիներով երզում եմ ձեզ, թո՛ղ իմ գլխին երկնային կրակը թափուի, եթէ ես մատնիչ եմ:

Մարդկային սրտի այդ չուսահատական կոծի մէջ այնքան հպարտութիւն և չուզմունք կար, որ հրա վերաբերմամբ այլ ևս ոչ ոք չէր տարակուսում: Ժշմարտութիւնը մի անչողողով բունց զգացմունք է. նա նման է մրրկին, նա նման է կատաղի ծովի այնկոծութեանը:

Յանկարծ, ախրող լուռութեան մէջ, Բիմուէլ-

դին ձօտեցաւ մի կին, որ մինչև այդ թաղըն-
լած էր շրջապատող թփերում և ահանշ էր
դնում կատարող դատին. կանաչք իրաւունք
չունեն ներկայ լինելու ծերունիների խորհրդին:

— Ես ձեզ հետ խօսելիք ունեմ, շնչաց կինը
Բիմուէլդին:

Ծնրունի հովիւը հեռացաւ նրա հետ մի
կողմը և, երբ մի կարճ միջոցից չետոյ վերա-
դարձաւ կրկին, զիմեց Բուվէրին այս խօս-
քերով:

— Վաղը ե՛կ Զիթենեաց տափարակի վրայ
և քեզ կրհատուցանեն ըստ արժանոյն:

Այստեղ Բուվէրը խնամարհեցնելով իւր զլուխը
երկար ժամանակ ադի արտասուք էր թափում
և ողբում իւր բազրը:

Նետնեայ օրը Զիթենեաց տափարակի վրայ
ժողովուել էր Սան-Բէնէդէտայի ամբողջ ժո-
ղովուրդը, Ամնեկկի անառոնների և Ալբի լեռ-
ների բոլոր բնակիչները:

Վեց աղամարդիկ, հրացաններով զինուած,
կիսաձայն խօսում էին իրար հետ:

Ամբոխի մէջ զգացում էր մի սպասողական
անհանդատութիւն, և ներկայ եղողների հաշ-
եայքները ուղղուած էին դէպի շրջակայքը:

Յանկարծ երիտասարդների մէջ լսուեց
մի շնչիւն.

— Ահա նա, ահա նա: Գալիս է. տեսնո՞ւմ
էք, ծուռում է դէպի աչ կողմը, գնում է արա-
հետով:

— Այո՛, տեսնում ենք. պատասխանեցին ծե-
րերը:

— Տիրեց լռութիւն: Նեռուից միայն լսում
էր առն վերագարձող հօտի զանգակների զրնդ-
զնդոցը: Այն մարդը, որի վրայ լարուած էր
ամենքի ուշադրութիւնն և որին այնպէս սրբ-
տաարօփ սպասում էին, հասաւ վերջապէս
ձօտակայ զիրքերին և շարունակում էր առաջ
դնալ ժպտերես նայելով ամենքին: Նաղիւ նա
անցել էր զինուած երիտասարդների խմբակի
ձօտով, երբ նրա չետեից զոռացին հարիւրա-
ւոր ձայներ.

— Բիարո՛ւ, Բիարո՛ւ: Դո՛ւ, լիւրբ անամօթ,
զգուշացի՛ր:

Նա չետ նայեց, շրջելով իւր հրէշաւոր
զլուխը դաղրելի աչքերով և նրա դէմքի վրայ
երևաց գարշելի մի ժպիտ: Նոյն այդ վայր-
կեանին վեց հրացանների փողերը ուղղուեցին
դէպի նա և տեղն ու տեղը զլորեցին անպի-
տանին:

Եւ երբ սպանուած Բիարուի աչքերը ծած-
կուեցին ճահեային ջրերի մթութեամբ, մի
քանի պատանիներ ձօտեցան դիակը բարձրա-

խորհրդածում էին ինձ համար մի ինչ որ մութ
անհասկանալի բանի մասին: Ուստի էին մտա-
ծում այդ մարդիկը սպանել: Ի՞նչ մի նոր
ոճիր էր ծրագրւում այս խուլ, մուսոն, մեր
չորս բոլորքը շրջապատող անապատում:

Խօսակցութիւնը տակաւին շարունակւում
էր:

— Իսկ եթէ գլխի՞ր ընկնեն ու հետքերը բըռ-
նեն, հարցնում էր ինչ որ մի երիտասարդա-
կան հնչուն ձայն:

— Բան չունե՞ս, ո՞վ է գլխի ընկնելու, պա-
տասխանեց մի բաժը ձայն, որը պատկանում
էր, ինչպէս ես դա ճանաչեցի, Վասիլի՛ Նե-
պոմնեաշչիին, Սախալինի տաժանակիր աշխա-
տանքներից փախած նախկին կայանաւորին:
Մի՛ անգամ կրխփե՞ք քարով նրա գլխին —
և ամեն մի հետք կրկորցնենք:

Ես այլ ևս անկարող եղայ ինձ զսպելու ու
վեր թռայ անդիցս:

— Այդ ո՞ւմ էր ուզում սպանել, աղէ՛րք.
հարցրի ես, շանալով իմ ծայնիս հանաքի
զոյն տալու, բայց միևնոյն ժամանակ զգում
էի, թէ ինչպէս սիրտս սկսում է բարախել
յուզուած, անհանգիստ:

Բոպէաչափ ատրեց մի լուութիւն. երկու-

երեք շարամիտ հայեացքներ շեշտակի ու ակըն-
թարթօրէն դարձան իմ կողմը:

— Շարիկի՛ն, ահա թէ ո՞ւմ. բացականչեց
բարկացած Պրոխորովը, ոչ այնքան երիտա-
սարդ մի բանուոր:

— Շարիկի՛ն — զարմացած հարցրի ես.
ինչո՞ւ:

— Ա՛յ այնպէ՛ս. նրա լաւ գործերի համար:

Ես այդ Շարիկին լաւ էի ճանաչում: Դա
մի փոքրիկ շուն էր, որ պատկանում է մեր
ոսկու հանքերի ուրեանիկներին, մի խելօք,
քաղցրահամբոյր շնի՛կ: Սա շատ սիրում էր
խաղալ երեխաների հետ, հանապաղ ըծնում էր
անցորդներին և ինձ համար միանգամայն ան-
հասկանալի էր, թէ ի՞նչ պատճառով բանուոր-
ները այդպէս չսիրեցին այդ բարեհոգի անա-
սունին:

— Ա՛խր ինչի՞ համար, է. կրկնեցի ես:

— Որովհետեւ շատ վնասակար արարած է,
այդ Շարիկը, ասաց Պրոխորովը, թափ տա-
լով իւր ծխամորեք: Դու մի՛ նայիր, որ նա
այնպէս խոնարհ, հեղ է ձևանում, կատարեալ
աղուէ՛ս. նրան այդպէս սովորեցրել են զիտ-
մամբ: Կարձ ասած նա մի լրտես է, և ուրիշ
ոչի՛նչ:

Ինձ զա հետաքրքրեց. ես նստայ կրակի

ձօտ և խնդրեցի Արօխօրովին մանրամասն պատմել այդ չորքրտանի «լրտեսի» մասին: Բանուօրը առանց երկար վարանելու սկսեց պատմել ինձ և ես ապշած լսում էի: Բանից դուրս էր գալիս, որ այդ հեզ, քաղցրահամբոյք քճնոյ շնիկը մի սարսափ էր դարձել բանուօրների համար, մի կատաղի թշնամի: Շարիկը հետամուտ էր լինում, որոնում, թէ հանքային բանուօրներից որոնց ձօտ օղի կար թագցրած *):

— Երբ ուրեաղնիկը գալիս է մեր բանուօրական հանրակացարանը օղի որոնելու, շարունակում էր Արօխօրովը — այդ անիծած շնիկն էլ հետն է գալիս: Բաւական է, որ ուրեաղնիկը բացականչէ «կո՛ւս, կո՛ւս», և նա թռչում է կացարանի բոլոր անկիւնները. վազում է մի թախթից միւսը, այստեղ հոտոտում, այնտեղ հոտոտում, պոչը խաղացնում. մի խօսքով, կարծես փող վաստակելու համար է այդքան աշխատում: Աստուած մի արասցէ, եթէ մի տեղ մի շիշ կամ ձիթամանով օղի թագցրած ունե՞ս, կրգտնի՛ այդ անիծածը: Կրնշանակէ, որ մի տեղ հոտ է առնում, և

*) Ասկու հանքերում խստիւ արգելուած էր բանուօրներին օղի ունենալ իրենց ձօտ:

կ'սկսէ այդտեղ իւր թաթերով չանկուտել: Իսկ ուրեաղնիկն էլ հէնց այդ է ուզում. որոնում և վերցնում է օղին, քեզ էլ բանտը կոխում:

— Բայց չէ՞ որ շիշը խցանով է փակուած:

— Բանն էլ հէնց նրանումն է, որ չունենք խցաններ. ուստի շշերի բերանները փակում ենք թղթի կամ լաթի կտորներով. անհա այդ պատճառով էլ շունն իսկոյն և ես օլու հոտը առնում է: Օրբնակ երեք օր առաջ այդ Շարիկը բանուօր վասկա կիրդիղի ձօտ հոտառութեամբ դտաւ մի ամբողջ ձիթաման լի օղի. և երեւակայեցէք ինչպէ՛ս. յատակի տակից հոտն առաւ: Այդ վասկան բարձրացրել էր յատակի մի տախտակը և այնտեղ մի աման օղի թաղրել. խեղճը կարծում էր, դա ամենապահով տեղը կըլինի: Իսկ մեր Շարիկն էլ, երբ ուրեաղնիկի հետ մեր բնակարանն եկաւ, հէնց նոյն բոպէին այդ թագցրած տեղի վրայ սկսեց յատակն իւր թաթերով չանկուտել. այդ բաւական չէ, անպիտանն սկսեց նոյն իսկ ոռնալ, կոնձկոնձալ

— Էհ շատ վատ է մեր բանը. դայրացած բացականչեց մի բարձրահասակ նիհար բանուօր, որ նստած էր իմ կողքին: Առաջները դոնէ մարդիկն էին մեզ ճնշում, հալածում, իսկ այժմ

տէս ո՞վ, շնե՛րն էլ սկսել են մեզ վրայ իրաւունք բանեցնել:

— Տիմա մի ինչ որ գարշելի շնից էլ ենք վախենում:

— Պէտք է ոչնչացնել, կորցնել այդ շունը:

— Բայց և այնպէս ամսո՞ս է սպանել — վրայ բերեցի ես:

— Իսկ մեզ չէ՞ք ամսոսում, հա՛ — որոտաց հսկայ Նեպոմնեաշին: Մէկ տեսէք է՛. ամսոսում են, գուժ հայցում մի ինչ որ շանր, իսկ մարդկանց ամսոսալ, խղճալ — այդ չկայ նրանց մէջ: Սոքա միշտ այդպէս են:

Պրոֆսորովը աշխատում էր վերջ դնել խօսակցութեանը և շարունակեց, դիմելով դէպ ինձ.

— Բանն հէնց նրանումն է, որ ուրիշ կերպ չի կարելի վարուել — Պետք նիկուլայիչ: Դու ինքդ խելքը դլխին մարդ ես, պէտք է հասկանա՞ս. մի՞թէ վիրաւորական չէ, որեէ շնից այդ տեսակ հալածանքներ կրել: Ես գուցէ իմ վերջին մանէթս տուել եմ և մի շիշ օղի մեռք բերել. դալիս եմ հանքերից, և մտածում, որ մի փոքր կրհանգստանամ, կրտաքանամ. մէկ էլ տեսնես, այդ շունը ճանապարհդ կտրեց: Խօսք չկայ, մենք սովորել ենք ուրեաղնիկից միշտ վիրաւորանքներ կրել, բայց որ մի շուն

մեզ վրայ իրաւունքներ բանեցնէ՞ դա արդէն չափից գուրս է: Մէկ տեսնե՛ս, թէ ուրեաղնիկն այդ շանր ինչ տեսակ բաներ է սովորեցրել. այժմս ուրեաղնիկի տան մօտով անցնել անգամ չի կարելի. որտեղից որտեղ Շարիկը դուրս կրպրծնի, չորս կողմդ կրվազվղի, պոչը կրխաղացնէ, քծնում է, իսկ քթով այս ու այն կողմն հոտոտում: Եւ եթէ այդ անպիտանը քեղանից պոկ չեկաւ, դիտցիր, որ արտղի հօտն առաւ. այն ժամանակ կամ կողակը կամ ինքն ուրեաղնիկը գուրս կրգայ պատշգամբի՝ վրայ. «էյ, դու, չեա դարձի՛ր, զրպաններդ շուռ տուր, տեսնե՛նք»: Եւ ծիծաղում, ծաղրում էլ են: Խնդրեմ ասա՛, մի՞թէ սա վիրաւորական չէ:

Պրոֆսորովը լռեց. տիրեց երկար, մոռացն ծանր մի լուռութիւն:

Բայց մի անգամ էլ ես օլին խաղացի այդ Շարիկի դլխին, ասաց մի պատճառի բանուոր: Ծննդեան տօներն էին. ես մի քիչ աւելի կոնժել էի ու պարկկլ — քնել էի: Գիշերն ըստ սովորականին եկաւ ուրեաղնիկն և Շարիկին այս ու այն կողմն ուղարկեց հոտոտելու: Ես էլ սպասեցի մինչև որ շունն ինձ մօտեցաւ, և դիտմամբ սկսեցի շնչառութիւնս դէպի նա ուղղել: Շարիկն օղու հոտն առաւ, բայց չգի-

տէր, թէ որտեղից է գալիս այդ հոտն, խեղճը
 չհասկացաւ: Եւ սկսեց կոնձկոնձալ, թուչկո-
 տայ, գետինը թաթերով չանկոտուել. ուրեւոր-
 նիկն էլ իմ ամբողջ ծահնակալս քրքրեց, որո-
 նեց, բայց ոչինչ չգտաւ և այնպէս էլ ձեռն-
 ունայն հեռացաւ: Մէկ տեսնելի՛ր, թէ ի՞նչ
 հահոց, ծիծաղ բարձրացաւ:

Խարոյկի կրակը մտրու՞մ էր արդէն: Չորս
 բոլորքը ախրու՞մ էր զիշերային մութ խաւար
 և մեռելային անվրդով մի լուռ-թիւն: Բանուոր-
 ները վերջացրին իրենց ընթրիքը և առանց
 շտապելու սկսեցին քնելու պատրաստութիւն-
 ները տեսնել: Պարկեցի և ես:

— Ա՛յ, տղերք, յանկարծ հնչեց Նեպոմնեաշ-
 չու խրոխտ ու բարձր ձայնը: Այս օրուայ մեր
 խօսակցութեան մասին, տեսէ՛ք հա՛, ոչ ոքի
 բերանից մի խօսք չպէտք է դուրս գայ: Ապա
 թէ ոչ ուրեաղնիկն ամեն ինչ կիմանայ, և
 Աստուած աղատէ, շատ և շատ անհամու-
 թիւններ ու զժգոհութիւններ կարող են առա-
 ջանալ:

Բանուորները ոչ մի բառ չարտասանեցին:
 Նորա հարկաւ շատ լաւ հասկացան, թէ հրա-
 ծայողական ծայնով արտասանած այդ բառերը
 վերաբերում էին ոչ թէ իրենց, այլ դիպուա-

ճով նրանց խմբի մէջ գտնուած, իրենց ընկերա-
 կցութեանը խորթ ու անծանօթ «պարոնին»:

Երբ ես մի քանի օրից չետոյ կրկին վերա-
 դարձայ հանքերը, ինձ ի միջի այլոց հաղոր-
 դեցին մի «նորութիւն». երեք օր առաջ սպա-
 նել էին ուրեաղնիկի շանը: Այս լուրը ինձ
 շատ քիչ զարմացրեց:

— Իսկ ինչո՞ւ համար սպանեցին — հետա-
 քրքրուեցի ես:

Եֆիմը, որ ինձ հաղորդեց այս լուրը, մի
 անտարբեր զժաղրութիւն տուեց իւր դէմքին
 և անմեղ ձևով արտասանեց.

— Ո՞վ գիտէ:

— Եւ, այդ է՞լ յայտնի չէ, թէ ո՞վ է սպա-
 նել — շարունակում էի ես հարցնել:



— Եւ՛ դա էլ յայտնի չէ. այստեղ այնքան
 բազմութիւ ու կասկածելի մարդիկ են վրխ-
 տում: Ուրեաղնիկը 25 բուբլի է խոստացել,
 ով որ իրեն մեղաւորը մատնացոյց անի. բայց
 ի զ՛ուր...


Մի փոքր լուռ-թիւնից չետոյ կրկին շարու-
 նակեց.

— Երեխաները ամբողջ օրերով լաց ու կոծ
 էին անում. յայտնի է, որ նորա խղճում էին
 շանը. Ծարիկը ուրախ զուարթ խաղում էր
 նրանց հետ, զուարճացնում էր նրանց:

Ի հարկէ երեխաները զեռ ևս չզիտէին և
չէին հասկանում, թէ ի՞նչ սոսկալի ու գար-
շէլի չարիք է լրտեսութիւնը... Մահ լըր-
տեսներին...







«Ազգային գրադարան»



NL0310286

57

6.661

ՄԵՐ ԷԺՈՆՈՒԳԻՆ ԳՐԱԴՐ

1. Քարը երզում է
2. Ճշմարիտ մեծութիւնը
3. Արդար ծերունին
4. Մեծ տօն
5. Նոր լոյս
6. Ուսման սէրը
7. Մանկան ձօս և վերջին խօսք
8. ՉԲՆԱՂ Մարօն
9. Մաթէօ Փայկօնէ (Լրտես)
10. Գարիբալդի (ճամուլի տպի է)

Handwritten signature or initials in blue ink.

Handwritten text in blue ink, possibly a name or title.